ՖԱԴԵՅ ՏԱՃԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ ծնվել է 1928 թ. սեպտեմբերի 18-ին, Երևանում։ Նրա արմատները պատմական Գողթան գավառից են։ 1945-ին ավարտել է Լենինգրադի կապի զինվորական ակադեմիան, ունի գեներալ-մայորի զինվորական կոչում։ 1946-ից աշխատել է պաշտպանության մինիստրության համակարգում։ 1968-ից եղել է Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ-ի գլխավոր ինժեներ՝ 1967-ից՝ տնօրեն։ 1977-ին ընտրվել է ակադեմիկոս, նույն թվականից մինչև 1989 թ. եղել է Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահը։ Պետական մրցանակների նոակի դափնեկիր է։

1998 թ. ապրիլի 8-ին ընտրվել է Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ։

Ինքնաբաշխման ուրախությամբ

● ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Խոշոր պետական գործչի, գիտնականի ու քաղաքացու ճանապարհը նա անցել է ոչ միայն ազնվաբար ու անձնվիրաբար՝ ծառայելով հային ու Հայաստանին, այլ նաև հաղթահարել է այդ ճանապարհի բազում դժվարություններն ու խոչընդոտները։ Եվ դա արել է բնատուր խելքի, տաղանդի, շռայլ բնավորության, ինտելեկտի ու ինտելիգենտության, մարդկային հմայքի ու իմաստնության շնորհիվ։

... Այս տողերը գրելուց առաջ մտորում էի, թե կարո՞ղ եմ Ֆադեյ Սարգսյանի դիմանկարի փորձ կատարել։ Իհարկե՝ ոչ։ Դրա համար առնվազն ուսումնասիրել, յուրացնել է պետք նրա անընդգրկելի վաստակի բոլոր փուլերը, հնարավորություն ունենալ թափանցելու նրա հոգու ծիր-կաթինները։ Իսկ դրանք ոչ միայն ժամանակ են պահանջում, այլ նաև գրողի, հետազոտողի տաղանդ ու բարեխղճություն։

Ահա, այդ պատճառով էլ, ներկայացնում եմ մի վավերագիր էջ, որը կարող է դառնալ ընդամենը միայն Ֆադեյ Սարգսյանի կազմակերպական ունակությունների, հզոր տրամաբանության ու համարձակ գործողությունների բնութագրության օրինակ, բայց ոչ երբեք նրա բազմաբեղուն կենսագրության մի դրվագն անգամ։

1988 թվականի մայիսին գործարկվեց Որոտանի հիդրոկայանների կասկադի չորրորդ՝ վերջին ու ամենամեծ Սպանդարյանի ջրամբարը։ Նրա պատնեշի բարձրությունը մոտ 100 մետր էր և պիտի կուտակեր 265 միլիոն խորանարդ մետր ջուր։ Շինարարական թունելի մուտքը փակելուց 15 օր հետո, երբ արդեն ջրամբարի մակարդակը բարձրացել էր 45—50 մետրով, իսկ ջրի քանակը հասել 80—90 մլն խորանարդ մետրի, շինարարական թունելից ջրի հոսք նկատվեց։ Մի քանի ժամ հետո, թունելից դուրս թռան բետոնե խցանները, պոկվեցին մուտքի և ներսի բետոնե կամարները և Որոտանի հունով պղտոր ալիքների հորձանուտը շարժվեց դեպի Սիսիան քաղաք ու գետափնյա մյուս գյուղերը։

Պահն օրհասական էր։ Ընդամենը երեք ժամում էվակուացվեցին 15 հազարանոց շրջկենտրոնը և մոտակա գյուղերը։ Վտանգը նրանում էր, որ շինարարական թունելը հարում էր ջրամբարի պատնեշին, և ջուրը կարող էր լայնացնել թունելախորշը, հասնել պատնեշի միջուկին, փլուզել այն։ Այդ դեպքում ջրամբարի ջուրը, պատնեշի հողային զանգվածի հետ, կըզահավիժեր շրջկենտրոն և կծածկեր այն։ Նախադեպը չունեցող այս «Պոմպեյի վերջին օրվա» հուսահատությունը հասել էր գագաթնակետին։

Եվ ահա, կարծես երկրնքից, անմիջապես աղետյալների կողքին է կանգնում հանրապետության կառավարության նախագահ Ֆադեյ Սարգսյանը։ Հոգեբանական իրավիճակը կտրուկ փոխվում է։ Մի քանի րոպե հետո ուղղաթիռը առաջին թռիչքն է կատարում, և զննելով տեղանքը, ուսումնասիրելով իրավիճակը, նախագահը հանպատրաստից մշակում է գործողությունների ծրագիրը, անվտանգության ապահովման երաշխիքները և, ամենակարևորը, ջրամբարի ջուրը արագ իջեցնելու ինժեներական հնարավորությունները։ Բոլոր հաշվարկները ցույց են տալիս, որ ջրամբարը կդատարկվի հինգ օրում, եթե պատնեշը դիմանա։ Գիշերը չի քընում Ֆադեյ Սարգսյանը։ Վաղ առավոտյան ուղղաթիռը ընդհուպ մոտենում է շինարարական թունելի վրա հանկարծակի բացված ձագարին. պետք է համոզվել, որ թունելը գրկող ապարները ամուր են։ Անցնում է ևս մեկ օր։ Կառավարության նախագահը ոչ ոքից օգնություն չի պահանջում, տեղում վճռում է բոլոր հարցերը։ Իսկ երբ 48 ժամյա ուշացումով ներկայանում է քաղաքացիական պաշտպանության հանրապետական շտաբի պետ գեներալը, հայհոյում է նրան պատերազմական ժամանակների օրենքներով և դուրս վռնդում։ Քիչ հետո հեռախոսային զըրույցներ է ունենում մայրաքաղաքի հետ և առօրյա հանձնարարություններ տալիս։ Արտերկ մենք սպասում ենք մի քիչ շունչ քաշել, ուրեմն վիճակը այնքան էլ կրիտիկական չէ, եթե նախագահը վթարի մասին չի խոսում։

Բացվում է երրորդ անքուն առավոտը, և ուղղաթիռը կատարում է հերթական ուղերթը։ Ֆադեյ Տաճատիչը ուղղաթիռի հրամանատարին կարգադրում է ավելի ներքև իջնել, վերջինս թեև լուռ կատարում է հրամանը, սակայն լայն բացված աչքերից գլխի ենք ընկնում, որ մեզ վտանգի ենք ենթարկում։ Իր համար ինչ-որ գաղտնիքներ պարզելով, նախագահը մեզ է նայում այս անգամ արդեն երևի գիտնականի ժպիտով և առաջարկում վերադառնալ շրջկենտրոն։

Այդ ժպիտը մեզնից ուրախության արցունքներ է քամում։ Ու թեև ջուրը նույն ուժգնությամբ քանդում է Որոտանի հազարամյա ափերը, իսկ տեղահանված ժողովրդի տագնապը դեռ չի անցել, Ֆադեյ Սարգսյանը հայտարարում է, որ վտանգը կարելի է անցած համարել։

Օրվա մնացած ժամանակը նա նվիրում է վթարի հետևանքների վերացման միջոցառումների մշակմանը, հետաքրքրվում է շրջանի էկոնոմիկայի մյուս հարցերով, զըրույցներ ունենում բնակչության հետ։ Այդքանն անում է առանց օգնականների, կոնկրետ ու արագ, հանոյքով ու ինքնաբաշխումի ուրախությամբ։

Առավոտյան մենք Երևան ենք ճանապարհում առողջանորհ այդ մարդուն։ Երախտագիտության արցունքները են մեր աչքերին։ Իսկ նա ողևորում է բոլորին, մաղթում փորձանքից հեռու լինել, պայմանավորվում մոտակա օրերին նորից գործնական հանդիպումներ կազմակերպել։ Դրանից հետո մեզ մնում է ինքնամոռաց գործի անցնել, հինգ անքուն գիշերներից հետո նախագահի նման թարմացած երևալ ու, որ շատ կարևոր է, այդպիսին նրան հավատալ։

Սպանդարյանի ջրամբարը դիմացավ, նրա շնորհիվ Որոտանի կասկադի ՀԷԿ-երը այսօր Հայաստանի էներգահամակարգի ամենահուսալի լույսի ու ջերմության աղբյուրներն են։ Սակայն 1988-ը նոր աղետ էր պատրաստում՝ այս անգամ անկասելի ու ահավոր։ Եվ Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացման խառնարանում մենք Ֆադեյ Սարգսյանի հետ հանդիպեցինք արդեն առանց ժպիտի։ Ոգին չէր ընկճվել, սակայն սիրտը ցավում էր։ Աշխատում էր նույն եռանդով, հնարամտությամբ ու արագությամբ, սակայն հեռանկարը մշուշոտ էր ու տագնապալի։

70 տարին -սոսկ հոբելյան է, իսկ առջևում Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում կյանքի կոչվող բազմադիմագիծ պրոբլեմներն են կանգնած, որ երիտասարդական ավյունով կյանքի է կոչելու Ֆադեյ Տաճատի Սարգըսյանը՝ մեր գիտության կաճառի նոր պրեզիդենտը։

Կրկնում ենք, լրագրային հոդվածում, նույնիսկ հատորներում իսկ հնարավոր չէ մեծ գիտնականի և խոշոր գործչի կերպարի ամբողջացման աղերսներ որոնել, հատկապես, որ նա քո ժամանակակիցն է։ Ուստի որպեսզի փարատենք մեր անհանգստությունը, փորձենք «Ինչ է տվել բնությունը Ֆադեյ Սարգսյանին» բազմանշանակ հարցին պատասխանել Համո Սահյանի միանշանակ տողերով.

Իր ջրվեժների անքնությունը...
Իր քարափների
համբերությունը...
Ինքնաբաշխումի
ուրախությունը,
Ինքնամերժումի
խիզախությունը,
Ինքնության պատիվն ու
թանկությունը,
Ինքն իր մեծությամբ
չպարծենալու
Երջանկությունը...

Շչորս ԴԱՎԹՅԱՆ